

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2000թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 2700.7 հազ. տոննա, որը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ նվազել է 14.1 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 1469.1 մլն.տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 2.5 տոկոսով:

2000թ. հունվար-օգոստոսի, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ.հունվար-օգոստոս	2000թ. հունվար-օգոստոսը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, տոկոսներով	2000թ. օգոստոս	2000թ. օգոստոսը 2000թ. հուլիսի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	2700.7	85.9	432.2	111.3
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	875.0	91.8	119.6	83.5
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	103.8	87.1	17.6	100.6
ներկրվել են բեռներ	573.9	114.7	80.7	119.0
ներհանրապետական փոխադրումներ	197.3	59.2	21.3	36.8
ավտոտրանսպորտով	1181.8	75.5	229.3	133.5
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ դրանից	29.5	45.7	4.1	110.8
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներկրվել են բեռներ դրանից	7.7	58.8	1.1	157.1
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներհանրապետական փոխադրումներ	144.0	95.4	20.4	105.2
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներհանրապետական փոխադրումներ	31.4	91.8	4.6	124.3
Մերձափնյա տրանսպորտով	1008.3	74.6	204.8	126.2
օդային տրանսպորտով	8.3	101.2	1.0	71.4
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	3.8	131.0	0.3	33.3
ներկրվել են բեռներ	4.5	84.9	0.7	140.0
խողովակաշարային տրանսպորտով	635.6	102.9	82.3	141.2

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ նվազել է 8.2 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 65.6 տոկոս (1999թ. հունվար-օգոստոսի 52.5 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 11.9 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 12.5 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 22.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 35.0 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-օգոստոսին 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ քարածխի փոխադրման ծավալն ավելացել է 6 անգամ, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 56.8 տոկոսով, իսկ սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 59.0 տոկոսով, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 54.5 տոկոսով, ցեմենտինը՝ 48.8 տոկոսով, հանքային շինարարական նյութերինը՝ 39.3

տոկոսով, նավթ ու նավթամթերքների՝ 36.1 տոկոսով և քիմիական և հանքային պարարտանյութերին՝ 14,4 տոկոսով, սև մետաղներին՝ 9.4 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 32.4 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-օգոստոսի 30.3 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-օգոստոսին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 3.7 տոկոսով՝ կազմելով 220.8 մլն. տոննա-կմ: Վազոնների միջին օրական բեռնաթափումը հունվար-օգոստոսին կազմել է 49 վազոն և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ նվազել 7 միավորով, իսկ բեռնումը՝ 11 միավորով և կազմել 21 վազոն: Նույն ժամանակաշրջանում 2.1 օրով դանդաղել է վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1181.8 հազ.տոննա (1999թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 24.5 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 12.2 տոկոս (1999թ. հունվար-օգոստոսի 9.6 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 21.8 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 22.7տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 4.1 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 26.1 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 20.3 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներին՝ 85.3 տոկոս (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 86.3 տոկոսի դիմաց): 2000թ. հունվար-օգոստոսին բեռնաշրջանառությունը կազմել է 22.8 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 14.6 տոկոսով:

2000թ. հունվար-օգոստոսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 43.8 տոկոս՝ 1999թ. հունվար-օգոստոսի 49.8 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 8.3 հազ. տոննա (1999թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 1.2 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 54.2 տոկոս (1999թ. հունվար-օգոստոսի 64.6 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 45.8 տոկոս (1999թ. հունվար-օգոստոսի 35.4 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 6.1 մլն.տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 24.7 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ:

խողովակաշարային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներկրվել 635.6 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի համեմատ աճել՝ 2.9 տոկոսով, բեռնաշրջանառությունը՝ 2.9 տոկոսով և կազմել 1219.4 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-օգոստոսին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 23.5 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-օգոստոսի 19.6 տոկոսի դիմաց:

Ուղևորափոխադրումներ. 2000թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 87839.8 հազ.մարդ, որը 1999թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.7

տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 1429.7 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 3.9 տոկոսով:

2000թ. հունվար-օգոստոսին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար-օգոստոս	2000թ.հունվար-օգոստոսը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, տոկոսներով	2000թ. օգոստոս	2000թ.օգոստոսը 2000թ հուլիսի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	87839.8	98.3	10181.0	101.5
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	711.2	74.2	164.6	147.0
ավտոտրանսպորտով	67293.3	102.6	7576.7	101.9
օդային տրանսպորտով	383.1	92.0	75.7	120.7
Էլեկտրատրանսպորտով	19452.2	86.9	2364.0	97.7

2000թ հունվար-օգոստոսին, ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.8 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-օգոստոսի համապատասխան ցուցանիշի 1.1 տոկոսի դիմաց, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 76.5 տոկոս, նախորդ տարվա 73.4 տոկոսի դիմաց, օդային տրանսպորտինը՝ 0.4 տոկոս և նախորդ տարվա 0.5 տոկոսի դիմաց, իսկ էլեկտրատրանսպորտինը՝ 22.1 տոկոս, նախորդ տարվա 25,1 տոկոսի դիմաց:

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-օգոստոսի նկատմամբ նվազել է 25.8 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 30.4 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 2.3 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ ավելացել է 2.6 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 963.7 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.6 տոկոսով:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ օդային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 383.1 հազ. մարդ, որի 48.6 տոկոսը (186.1 հազ. մարդ) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը: Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 0.9 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվար-օգոստոսի 1.2 տոկոսի դիմաց):

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 355.3 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 16.0 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ. 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների թվաքանակը կազմել է 19452.2 հազ.մարդ և 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ նվազել 13.1 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 80.3 մլն. ուղևոր-

կմ և նախորդ տարվա հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 13.7 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-օգոստոսին կազմել է 51.1 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 31.0, տրամվայով՝ 16.9 և ճոպանուղով՝ 1,0 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2000թ. հունվար-օգոստոսին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է ճանապարհային պատահարների 570 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 11.1 տոկոսով: Պատահարներից զոհվել է 134 և վիրավորվել 744 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխանաբար՝ 138 և 777 մարդու դիմաց: